Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ 12

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2020 թվականի ապրիլի 17-ին, ժամը 12^{00}–ին առցանց տարբերակով՝ meet.google.com հարթակով տեղի ունեցավ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) Գիտական խորհրդի նիստ:

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պրոֆեսոր Դավիթ Խիթարյանը:

Գիտական խորհրդի 34 անդամներից նիստին մասնակցում էին 28-ը, որից 10-ը նիստին ներկա էին՝

1. Դ. Խիթարյան, 2. Գ. Սարգսյան, 3. Ա. Նուշիկյան, 4. Վ. Գևորգյան, 5. Լ. Ստեփանյան, 6. Տ. Սիմոնյան, 7. Ռ. Մարտյան, 8. Ա. Հակոբյան, 9. Յու. Գրիգորյան, 10. Ա. Դանիելյան,

իսկ 18-ը՝ մասնակցում էին առցանց տարբերակով.

1. Ա. Չատինյան, 2. Օ. Պետրոսյան, 3. Գ. Մուրադյան, 4. Հ. Բաբայան, 5. Ս. Դանիելյան, 6. Ա. Հարությունյան, 7. Մ. Ասատրյան, 8. Ս. Հովեյան, 9. Հ. Մելքոնյան, 10. Գ. Նալբանդյան, 11. Ա. Ստեփանյան, 12 Ա. Բաղդասարյան, 13. Ա. Բարսեղյան, 14. Լ. Մկրտչյան, 15. Մ. Աղաբաբյան, 16. Ա. Ավետիսյան:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին՝ Խ. Հարությունյանը, Է. Մարտիրոսյանը, Ն. Սելումյանը, Դ. Սարգսյանը, Ա. Բաղալյանը, Ս. Սիմոնյանը, Ս. Առուշանյանը, Վ. Վիրաբյանը:

(Գիտական խորհրդի նիստի մասնակիցների գրանցացուցակը կցվում է):

Մինչ օրակարգին անցնելը՝ պարոն Խիթարյանն առաջարկեց Գիտխորհրդի օրակարգ մտցնել Արտաքին գրախոսման մասին նախարարի ցուցումը, որը պետք է հաստատվի ինստիտուտի Գիտական խորհրդում:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Խիթարյանն առաջարկեց հաստատել օրակարգը:

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին Գիտական խորհրդի նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019–2020 ուսումնական տարվա բակալավրիատի 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի առկա և հեռակա ուսուցման մանկավարժական, կլինիկական և առկա ուսուցման մագիստրանտների գիտամանկավարժական ու գիտահետազոտական պրակտիկաների վերաբերյալ նախագծի հաստատում

(Զեկուցող՝ Պրակտիկայի և կարիերայի բաժնի պետ Մ. Բարբարյան)

2. 2019-2020 ուստարվա գարնանային քննաշրջանի անցկացման ձևաչափի նախագծի հաստատում

(Զեկուցող՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան Լ. Ստեփանյան)

3. **2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության և պաշտպանության ժամանակացույց**

(Զեկուցող՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան Լ. Ստեփանյան)

4. 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի հաստատում

(Զեկուցողներ՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան Լ. Ստեփանյան,

ՍՄԿ ֆակուլտետի դեկան Տ. Սիմոնյան,

Մագիստրատուրայի բաժնի պետ Ա. Ստեփանյան)

5. Գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության

«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» միջազգային մրցույթին մասնակցելու հարց

(Զեկուցող՝ մ. գ. թ. , պրոֆեսոր Ս. Հովեյան)

6. Բակալավրական ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության կարգի վերաբերյալ որոշման նախագծի հաստատում

(Զեկուցող՝ Իրավական ապահովման բաժնի ղեկավար Օ. Պետրոսյան)

7. Այլ հարցեր

1. ***Լսեցին՝*** *Պրակտիկայի և կարիերայի բաժնի պետ Մ. Բարբարյանին: Նա* ներկայացրեց 2019–2020 ուսումնական տարվա բակալավրիատի 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի առկա և հեռակա ուսուցման մանկավարժական, կլինիկական և առկա ուսուցման մագիստրանտների գիտամանկավարժական ու գիտահետազոտական պրակտիկաների վերաբերյալ նախագիծը, մասնավորապես նշելով, որ այն պրակտիկաները, որոնք 50 տոկոս և ավելի կատարվել են, հիմք ընդունել և կրեդիտները հաշվել ամբողջությամբ: Իսկ այն պրակտիկաները, որոնք չեն սկսվել, դրանք սկսել արտակարգ իրավիճակի սահմանափակումից հետո:

(Պրակտիկաների վերաբերյալ նախագիծը կցվում է):

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին՝ 2019–2020 ուսումնական տարվա բակալավրիատի 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի առկա և հեռակա ուսուցման մանկավարժական, կլինիկական և առկա ուսուցման մագիստրանտների գիտամանկավարժական ու գիտահետազոտական պրակտիկաների վերաբերյալ նախագիծը հաստատել:

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

2. Լսեցին՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան Լ. Ստեփանյանին: Նա ներկայացրեց 2019-2020 ուստարվա գարնանային քննաշրջանի անցկացման առցանց ձևաչափի նախագիծը:

Արտահայտվեց՝ Ռեկտորի պաշտոնակատար Դ. Խիթարյանը նշեց՝ Ուսումնա-գիտական գծով պրոռեկտորի, դեկանների հետ մեկշաբաթյա քննարկումներից,

վերլուծություններից հետո որոշել են գարնանային քննաշրջանը չհետաձգել և քննություններն անցկացնել նախօրոք սահմանված ուսումնական պլանին համապատասխան:

(Գարնանային քննաշրջանի անցկացման առցանց ձևաչափի նախագիծը կցվում է):

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին՝ ձևաչափը չհաստատել և գարնանային քննաշրջանը և քննություններն անցկացնել նախօրոք սահմանված ուսումնական պլանին համապատասխան:

3. Լսեցին՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան Լ. Ստեփանյանին: Նա ներկայացրեց 2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության և պաշտպանության ժամանակացույցը:

Արտահայտվեց՝ Ռեկտորի պաշտոնակատար Դ. Խիթարյանն ասաց, որ ժամանակացույցի վերաբերյալ ամբիոնի վարիչները մեկ շաբաթվա ընթացքում իրենց առաջարկություններն էլեկտրոնային տարբերակով ուղարկեն Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Գ. Սարգսյանին, որից հետո փաստաթղթի վերջնական տարբերակը ռեկտորի որոշմամբ կհրատարակվի:

Ուսանողական խորհրդի անդամ Մարիամ Աղաբաբյանին մտահոգում էր, եթե արտակարգ իրավիճակը շարունակվի, ինչպես պիտի պաշտպանվեն ավարտական աշխատանքները և անցկացվեն եզրափակիչ քննությունները:

Պարոն Խիթարյանը ներկայացրեց, թե ինչպես պիտի ZOOM հարթակում անցկացվեն եզրափակիչ քննությունները և ինչ ձևաչափով ներկայացվեն ավարտական աշխատանքները (PDFֆայլով ուղարկել կամ համապատասխան ամբիոն, կամ իրենց գիտական ղեկավարին: Դիտարկումներ անելուց հետո աշխատանքը հետ կուղարկվի: Շտկումներից հետո կունենաք նախնական պաշտպանություն ամբիոնում: Կգրախոսվի, ղեկավարի կարծիքի հետ միասին կհավաքվի, այնուհետև ZOOM հարթակում հանձնաժողովի անդամները կանցկացնեն նախնական պաշտպանություն):

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

(2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության և պաշտպանության ժամանակացույցը կցվում է):

Որոշեցին՝ 2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության և պաշտպանության ժամանակացույցի լրամշակված տարբերակն ընդունել ի գիտություն:

4. ***Լսեցին՝*** *ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան Լ. Ստեփանյանին, ՍՄԿ ֆակուլտետի դեկան Տ. Սիմոնյանին, Մագիստրատուրայի բաժնի պետ Ա. Ստեփանյանին*: Նրանք Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեցին 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի նախագիծը:

(2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների լրամշակված կազմը կցվում է):

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին՝ 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի նախագիծը շտկումով հաստատել:

5. Լսեցին՝ Իրավական բաժնի պետ Օ. Պետրոսյանին: Նա ներկայացրեց բակալավրական ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության կարգի վերաբերյալ որոշման նախագծը, *այն է՝* Ինստիտուտում 2019-2020 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները հնարավորության դեպքում կազմակերպել առանց արտաքին գրախոսման:

Արտահայտվեցին՝ Դ. Խիթարյանը, Գ. Սարգսյանը, Ա. Չատինյանն արձանագրեցին, որ երկրի համավարակով պայմանավորված իրավիճակից ելնելով՝ արտաքին գրախոսականը բուհում պարտադիր պայման չէ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի արտաքին գրախոսման մասին շրջաբերականը իրավական հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է Գիտական խորհրդի որոշումը:

(Արտաքին գրախոսման վերաբերյալ Գիտական խորհրդի որոշումը կցվում է):

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին՝

1. Հաշվի առնել Հայաստանի Հանրապետությունում համավարակով պայմանավորված իրավիճակը, գերադասել մարդկանց առողջության ապահովումը և համավարակի տարածման կանխարգելումը, ինչպես նաև ընդունել Հաայստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի ապրիլի 3-ի թիվ 01/06/7933-20 գրությունը՝ Ինստիտուտում 2019-2020 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները կազմակերպել առանց արտաքին գրախոսման:
2. Միաժամանակ Ինստիտուտը կարևորելով ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակի ապահովումը՝ հնարավորության դեպքում կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ներքին գրախոսման անցնելը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատման պահից:

6. ԼՍԵՑԻՆ՝ Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի ամբիոնի վարիչ, մ. գ. թ., պրոֆեսոր Ս. Հովեյանին: Նա ներկայացրեց Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» միջազգային մրցույթին մասնակցելու՝ «Բուհի դասախոսների առողջացմանն ուղղված գիտականորեն հիմնավորված ծրագիր՝ կանխարգելիչ և ֆիզկուլտուրային-առողջարարական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ» ծրագիրը:

Արտահայտվեցին՝ պրոֆեսոր Դ. Խիթարյանը, պրոֆեսոր Գ. Սարգսյանը, Ա. Նուշիկյանը: Նրանք հավանություն տվեցին կատարած աշխատանքներին և առաջարկեցին երաշխավորել ծրագիրը Գիտության պետական կոմիտե ներկայացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել «Բուհի դասախոսների առողջացմանն ուղղված գիտականորեն հիմնավորված ծրագիր՝ կանխարգելիչ և ֆիզկուլտուրային-

առողջարարական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ» ծրագրի նախագիծը Գիտության պետական կոմիտե ներկայացնելու համար:

7. Այլ հարցեր՝

Լսեցին՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան Լ. Ստեփանյանին: Նա ներկայացրեց ավարտական աշխատանքի գրախոսության ձևանմուշը:

Արտահայտվեց՝ Դ. Խիթարյանը նշեց, որ գրախոսության ձևանմուշը կուղարկվի ամբիոններ. մեկ շաբաթվա ընթացքում ամբիոնները պետք է իրենց դիտողություններն ու առաջարկությունները գրավոր ներկայացնեն Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Գ. Սարգսյանին, որից հետո ձևանմուշի լրամշակված տարբերակը ռեկտորի որոշմամբ կուղարկվի ամբիոններին, որպեսզի բոլորի գրախոսականը լինի մեկ ձևաչափով:

(Ավարտական աշխատանքի գրախոսության ձևանմուշը կցվում է):

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին՝ հաստատել ավարտական աշխատանքի գրախոսության ձևանմուշի լրամշակված տարբերակը:

Արձանագրությունը կազմեց Ե. Սիմոնյանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ. ԽԻԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՉԱՏԻՆՅԱՆ